ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2025թ. սեպտեմբերի 4-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 27-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահի առաջարկով, խորհրդի անդամները 1 րոպե լռությամբ ոտոնկայս հարգեցին խորհրդի անդամ, Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Վարդան Բաբկենի Բոստանջյանի հիշատակը: Քվորումը ստուգելուց հետո, խորհրդի նախագահի առաջարկով, նիստի օրակարգում կատարվեց փոփոխություն՝ ընթացիկ հարցերում նախատեսված անվանական կրթաթոշակառուների հաստատման հարցը թվագրվեց որպես օրակարգի թիվ 4 հիմնական հարց, և խորհրդի նախագահը քվեարկության դրեց փոփոխված օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում
2. ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» դրամաշնորհի շրջանակում գիտական թեմաների կատարման առաջին տարվա հաշվետվությունների ընդունում
3. ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից հայտարարված «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025» մրցույթին հայտի երաշխավորում
4. Անվանական կրթաթոշակառուների հաստատում
5. Ընթացիկ հարցեր

1. Հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ներկայացրեց ատեստավորվող վեց հայցորդներին և հեռակա ուսուցմամբ մեկ ասպիրանտին: Ընդգծեց, որ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը հայցորդներ և հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ չունի, և օրակարգի առաջին հարցի քննարկումը՝ ըստ ամբիոնների, սկսելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին հարցը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնը հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ չունի, իսկ ամբիոնի հայցորդները երեքն են՝ Հայրապետյան Գայանե Վարուժանի (վերջին տարի), Հակոբյան Ծուլի Արմենի (3-րդ տարի), Մարտիրոսյան Արմեն Աքիլեսի (1-ին տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Գայանե Վարուժանի Հայրապետյանի «Ներդրումային գրավչության հիմնախնդիրները ՀՀ սարքաշինության ոլորտում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Վ.Հ. Առաքելյան) ատենախոսության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքի վերաբերյալ ամբիոնը հաշվետվություն չի ստացել, հայցորդը ամբիոնի նիստին չի ներկայացել: Հավելեց, որ հայցորդը որոշակի ֆինանսական պարտավորություններ ունի և առաջարկեց չատեստավորել:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Ծուլի Արմենի Հակոբյանի «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները ՀՀ Ծիրակի մարզում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյան) ատենախոսության շրջանակներում կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրում: Ուսումնասիրվել են ՀՀ Ծիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը, ինչպես նաև Ծիրակի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն, ինչպես նաև ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի գործընկերության «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» ծրագրերը: Պատրաստ է ատենախոսության 1-ին գլուխը, հավաքագրվել են նյութեր 2-րդ գլխի վերաբերյալ:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Լ. Սարգսյան) ատենախոսության շրջանակներում կատարվել է գրականության ուսումնասիրում և նյութերի հավաքագրում: Մասնակցել է «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Գիտության փիլիսոփայություն», «Անձնային աճ և ինքնակարգավորում», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ», «Անգլերեն լեզու» դասընթացներին և հանձնել է քննությունները: Մասնակցել է 2 գիտաժողովի և հանդես է եկել զեկուցումներով: Հանձնել է մասնագիտական որակավորման քննությունները: Տպագրել է 7 հոդված՝ համահեղինակությամբ:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդները՝ բացառությամբ Գայանե Վարուժանի Հայրապետյանի, հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ.,

դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 03.09.2025թ. թիվ 1 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հայցորդների՝ բացառությամբ Գայանե Վարուժանի Հայրապետյանի, կատարած աշխատանքները և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Շուլի Արմենի Հակոբյանի (3-րդ տարի) և Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի (1-ին տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 03.09.25թ. թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցորդ Գայանե Վարուժանի Հայրապետյանը չի ներկայացել նիստին՝ վերջին տարվա հայցորդ Գայանե Վարուժանի Հայրապետյանի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել անբավարար և չատեստավորել:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդները՝ բացառությամբ Գայանե Վարուժանի Հայրապետյանի, ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին հարցը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը՝ նշելով, որ ամբիոնը ունի մեկ հայցորդ՝ Անահիտ Արտաշեսի Կարախանյան (1-ին տարի), իսկ հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ չունի:

Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հայտնեց, որ Անահիտ Արտաշեսի Կարախանյանը «Հարկային քաղաքականության մշակման և իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման գործում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բ. Բոստանջյան) ատենախոսության շրջանակներում ծանոթացել է հիմնախնդիրներին առնչվող տեսական գրականությանը, կատարել է և շարունակում է կատարել համապատասխան թարգմանություններ: Ձևակերպված է ատենախոսության արդիականությունը, հիմնական նպատակները և խնդիրները, սահմանված է նաև կառուցվածքը: Ատենախոսության 1-ին գլուխն ունի ավարտուն տեսք: Մասնակցել է կրթական բաղադրիչի պարտադիր և կամընտրական դասընթացներին, հանձնել է քննությունները: 32 կրեդիտային միավորներից հավաքել է 28-ը: Չի մասնակցել միայն 1 պարտադիր դասընթացի (անգլերեն): Պրակտիկայի համար ներկայացրել է համապատասխան տեղեկանք աշխատանքի վայրից (ՀՀ ՊԵԿ): Հրատարակել է 1

հոդված՝ «Անուղղակի հարկերի կիրառության առաջավոր փորձի ներդրման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ: Տպագրման փուլում են «Հարկային համակարգի դերը և տեսագործնական նշանակությունը» և «Հարկման գործառույթների իրականացման ապահովումը՝ ըստ հարկային բեռի բաշխման» հոդվածները:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդը հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել է պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի 03.09.2025թ. թիվ 1 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հայցորդի կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Անահիտ Արտաշեսի Կարախանյանի (1-ին տարի) կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել:

Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդն ատեստավորվեց՝ միաձայն քվեարկությամբ (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին հարցը:

1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնը ունի երկու հայցորդ՝ Մաշուրյան Ռաֆիկ Գագիկի (3-րդ տարի), Բաղդասարյան Հայկ Վարդանի (1-ին տարի) և հեռակա ուսուցմամբ մեկ ասպիրանտ՝ Պոռգյան Արեգա Հարությունի (1-ին տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» թեմայով (ղեկավար տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Առաքելյան) ատենախոսության շրջանակներում տպագրվել է 1 հոդված, ևս 1 հոդված պատրաստ է հրատարակման: Կատարվել են հետազոտական աշխատանքներ՝ մասնավորապես կենտրոնանալով սպառման շղթաների մոդելավորման և խնդիրների բացահայտման վրա խոշոր ընկերություններից մեկի օրինակով: Հետազոտության նպատակն է մշակել մոդել, որը կբացահայտի սպառման գործընթացներում առկա խանգարող գործոնները և թույլ կտա բարելավել արդյունավետությունը: Այս

ուղղությամբ ներկայումս փորձարկվում է մեքենայական ուսուցման ժամանակակից գործիքներից մեկը՝ կլաստերային վերլուծության (clustering) մոդելը, որի միջոցով փորձ է արվում պարզել և առանձնացնել սպառման շղթայում եղած անոմալիաները: Տվյալ մեթոդը հնարավորություն է տալիս առանձնացնել ոչ տիպիկ վարքագծեր՝ առանց նախապես սահմանված պիտակավորման, ինչը հատկապես արժեքավոր է իրական արդյունաբերական գործընթացների վերլուծության ժամանակ: Կրթական բաղադրիչի 32 կրեդիտային միավորներից հավաքել է 27-ը, հաջորդ կիսամյակում պլանավորում է լրացնել մնացած 5-ը:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Հայկ Վարդանի Բաղդասարյանի «Ջրային կուլտուրաների և անտառային տնտեսության զարգացման ազդեցության գնահատումը ՀՀ կայուն զարգացման վրա» թեմայով (ղեկավար տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Առաքելյան) ատենախոսության շրջանակներում իրականացվել են հետազոտական աշխատանքներ: Հետազոտության ընթացքում կազմվել է «Ապահովել սննդի անվտանգությունը մատակարարման շղթայի որակի վերաբերյալ նախաձեռնողական արձագանքի միջոցով» վերնագրով անգլերեն զեկույց: 2024 թվականի օգոստոսի 6-7-ը Չինաստանի մայրաքաղաք Պեկինում կայացած «Գիտությունը ժամանակակից հասարակությունում» միջազգային X գիտագործնական համաժողովի շրջանակներում տպագրվել է գիտական հոդված և մասնակցության համար հեղինակն արժանացել է վկայականի:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Արեգա Հարությունի Պոռգյանի «Մարդ-համակարգիչ փոխազդեցության կիրառումը կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի գնահատման գործընթացում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Ա. Գևորգյան) ատենախոսության շրջանակներում կատարվել է գրականության ուսումնասիրում: Կուտակել է պարտադիր դասընթացներից 4, իսկ ընտրովի դասընթացներից՝ 3 կրեդիտ: Հետազոտության համար անհրաժեշտ տեխնիկան արդեն գտնվում է ՀՀ-ում, սակայն հիմնական հետազոտությունը չի սկսվել՝ սարքավորումների տեղադրված և գործարկված չլինելու պատճառով:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդները և հեռակա ուսուցմամբ ասպիրանտը հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 03.09.2025թ. թիվ 1 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հայցորդների, հեռակա ուսուցմամբ ասպիրանտի կատարած աշխատանքները և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները հայցորդներ՝ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի (3-րդ տարի), Հայկ Վարդանի

Բաղդասարյանի (1-ին տարի) և հեռակա ուսուցմամբ ասպիրանտ՝ Արեգա Հարությունի Պոռգյանի (1-ին տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդները և հեռակա ուսուցմամբ ասպիրանտը ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2. ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» դրամաշնորհի շրջանակում գիտական թեմաների կատարման առաջին տարվա հաշվետվությունների ընդունում

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հակիրճ ներկայացրեց քննարկվող համատեքստի պատկերը: Անցյալ տարի «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» դրամաշնորհի շրջանակում ներկայացված 52 հայտից ֆինանսավորվել է 13-ը, որից 5-ը ԵՊՀ հայտեր են եղել: ԵՊՀ 5 հայտերից՝ 2-ը Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետից ներկայացված հայտեր են՝ 1) «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը և լուծման ուղիները ՀՀ-ում» (գիտական թեմայի արտասահմանյան ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Ֆելիքս Արիոն (Ռումինիա), հայաստանյան համաղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյան) և 2) «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն» (գիտական թեմայի արտասահմանյան ղեկավար՝ Դարեն Ջերգլ, հայաստանյան համաղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ Ենոք Բենիամինի Հակոբյան) գիտական թեմաներով: Օրակարգի երկրորդ հարցի քննարկումը՝ ըստ գիտական թեմաների, սկսելու համար դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ զեկուցմամբ:

2.1 ԼՍԵՑԻՆ. «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը և լուծման ուղիները ՀՀ-ում» գիտական թեմայի կատարման 2024-2025թթ. հաշվետվության մասին հարցը:

2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Գիտական թեմայի ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ գիտխորհրդի անդամները էլեկտրոնային ծանուցմամբ ստացել են գիտական թեմայի կատարման առաջին տարվա հաշվետվությունը, հետևաբար թեմայի բովանդակային ներկայացումը կլինի հակիրճ: Ընդգծեց, որ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» դրամաշնորհի շրջանակում գիտական թեմաների կատարման գործում առանցքային է լաբորատորիաների հիմնումը: Այդ ուղղությամբ ֆակուլտետում համակարգված աշխատանքներ են տարվում՝ առանձնացված սենյակները վերանորոգման և կահավորման փուլում են: Խումբն առաջին տարում գրականության համապարփակ ուսումնասիրություն է կատարել, վերլուծական հաշվետվություն է իրականացրել, 2 գիտական հոդված է պատրաստել տպագրության:

Հավելեց, որ թեմայի կատարման շրջանակում պետք է տպագրվի 8 հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ), որից 4-ը՝ Q1 և Q2 ինդեքս ունեցող պարբերականներում: Հույս հայտնեց, որ մինչև 2026 թվականի մարտը 2 հոդվածները հրատարակված կլինեն: Դոցենտ Կ.Խաչատրյանը ընդգծեց, որ գիտական թեմայի արտասահմանյան գործընկերների հետ քննարկումները մշտական բնույթ են կրել: Կարևորեց այն փաստը, որ թեմայի արտասահմանյան համաղեկավարները այցելել են համալսարան (Ռումինիայից պրոֆեսոր Ֆելիքս Արիոնը՝ 1 անգամ, և Ռուսաստանի Դաշնությունից տ.գ.թ. Նիկոլայ Դմիտրիևը՝ 2 անգամ) և տեղում ակտիվ համագործակցություն են ծավալել: Ամփոփելով ընդգծեց, որ գիտական թեմայի շրջանակում աշխատանքները կատարվել են ըստ ժամանակացույցի՝ ներկայացված օրացույցային պլանի համաձայն և առաջարկեց գնահատել կատարված աշխատանքը:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատել քվեարկությամբ:

2.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանություն տալ «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը և լուծման ուղիները ՀՀ-ում» գիտական թեմայի (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կաղլեն Գագիկի Խաչատրյան) կատարման 2024-2025թթ. հաշվետվությանը և գնահատել դրական՝ քվեարկության 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով (հաշվետվությունը կցվում է):

2.2 ԼՍԵՑԻՆ. «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն» գիտական թեմայի կատարման 2024-2025թթ. հաշվետվության մասին հարցը:

2.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Գիտական թեմայի ղեկավար տ.գ.թ., ասիստենտ Ե.Հակոբյանի հարգելի բացակայությամբ պայմանավորված, «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն» գիտական թեմայի կատարման 2024-2025թթ. հաշվետվությունը ներկայացրեց խմբի անդամ տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը: Նախ նշեց, որ հաշվետու տարում թեմայի իրականացման ընթացքի և ձեռքբերումների վերաբերյալ համապարփակ հաշվետվությունը էլեկտրոնային ծանուցմամբ հասանելի է եղել գիտխորհրդի անդամներին: Ընդգծեց, որ հոդված տպագրելու խնդիր չի եղել, կարևորեց 3 մեծ սարքերի գնման փաստը, ինչը թույլ կտա գիտական ծրագրով նախատեսված խնդիրներ լուծել: Հավելեց, որ թեմայի ընդգրկունությամբ պայմանավորված առանձնացվել են 5 հիմնական ուղղություններ և այդ առաջարկը մեծ ուրախությամբ է ընդունվել գիտական թեմայի արտասահմանյան ղեկավար՝ Դարեն Ջերգլի (Northwestern University) կողմից: Ամփոփելով ընդգծեց, որ 2024թ.

սեպտեմբերից մինչև 2025թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում գիտական թեմայի շրջանակում իրականացվել է զգալի աշխատանք՝ հստակեցվել են թե՛ տեսական, թե՛ մեթոդական հիմքերը: Թիմը հաջողությամբ ավարտել է գրականության համապարփակ ուսումնասիրությունը, ձեռք է բերել խորացված պատկերացում աչքի հետևման, EEG (Էլեկտրոէնցեֆալոգրաֆիայի) և GSR (Մաշկի գալվանական ռեակցիայի) սարքավորումների հնարավորությունների մասին, ինչպես նաև մշակել է տվյալների հավաքագրման ամբողջական պրոտոկոլ՝ ապահովելով հետագա փորձարարությունների և տվյալների բազայի ստեղծման համար անհրաժեշտ հիմքը:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտներ Ա.Խառատյանը և Կ.Խաչատրյանը:

Հարցադրումներն առնչվում էին թեմայի կատարման համար առանձնացված 5 հիմնական ուղղությունների ներկայացմանը, թեմայի արտասահմանյան համաղեկավարների Հայաստան հնարավոր այցելություններին:

3. Պրոֆեսոր Ռ.Գևորգյանը հակիրճ պատասխանեց հարցադրումներին: Նախ թվարկեց առանձնացված 5 հիմնական ուղղությունները. 1) էկոլոգիական խնդիրների լուծում, 2) վարքագծային ֆինանսներ, 3) ֆինանսական ռիսկերի գնահատում, 4) մեքենայական ուսուցման գնահատում, 5) աչքի հետևող սարքերի (eye tracker) աշխատանքի համադրում: Հայաստան արտասահմանյան համաղեկավարների այցի հետ կապված նշեց, որ ամռանը նախատեսված այցը չկայացավ՝ սարքերի բացակայության պատճառով: Հավելեց նաև, որ սարքերի փորձարկման համար անհրաժեշտ է դիմել սարքերը վաճառողներին (vendors)՝ խմբի հայաստանյան անդամներին տեղում (արտերկրում) սովորեցնելու նպատակով:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նախ նշեց, որ ֆակուլտետում գիտահետազոտական աշխատանքները պետք է լայն թափ ստանան, հատկապես միջազգային դրամաշնորհների շրջանակներում: Հավելեց, որ վերջին երկու տարում ֆակուլտետից ներկայացված 27 հայտից 13-ը (գրեթե 50%-ը) հաղթել են: Այս ուղղությամբ ակտիվ աշխատելու դեպքում կարելի է հասնել բազային ֆինանսավորման, ինչը թույլ կտա մեծացնել և՛ թվաքանակը խմբերում, և՛ ՄԳԾ հոդվածների քանակը: Հարցի քննարկումն ամփոփելով, դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատել քվեարկությամբ:

2.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանություն տալ «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն» գիտական թեմայի (ղեկավար՝ տ.գ.թ., ասիստենտ Ենոք Բենիամինի Հակոբյան) կատարման 2024-2025թթ. հաշվետվությանը և գնահատել դրական՝ քվեարկության 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025» մրցույթին՝ «Մարդ-

համակարգիչ փոխազդեցության կիրառումը կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի կառավարման գործընթացում» (հայտատու՝ Արեգա Հարությունի Պոռազյան, ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2-րդ տարվա հեռակա ասպիրանտ) թեմայով հայտի երաշխավորման մասին հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2-րդ տարվա հեռակա ասպիրանտ Արեգա Պոռազյանը նշեց, որ սույն հայտի ներկայացման հիմնական նպատակը իր ատենախոսության շրջանակներում դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ձեռքբերումն է: Հավելեց, որ դրամաշնորհի գումարի մեծ մասը պատրաստվում է հատկացնել ձևակերպված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծմանն ուղղված հարցումների և փորձարարությունների մասնակիցներին՝ որպես վարձատրություն, իսկ մնացած մասը՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում հոդվածների տպագրությանը:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, նշեց, որ նախորդ տարի ֆակուլտետից նմանօրինակ հայտեր են ներկայացրել և շահել Կառավարման և գործարարության ամբիոնի 2-րդ տարվա առկա ասպիրանտներ՝ Սիլվիա Սարգսյանը և Ալիսա Գևորգյանը («Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» մրցույթին): Արեգա Պոռազյանին մաղթեց հաջողություն: Հարցի քննարկումն ամփոփելով, դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ քվեարկությամբ հայտը երաշխավորել մրցույթին մասնակցելու համար:

3. ՈՐՈՇԵՑԻՆ.

«Մարդ-համակարգիչ փոխազդեցության կիրառումը կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի կառավարման գործընթացում» (հայտատու՝ Արեգա Հարությունի Պոռազյան, ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2-րդ տարվա հեռակա ասպիրանտ) թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4. ԼՍԵՑԻՆ. 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին հարցը:

4. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ԵՊՀ-ն 4 անվանական կրթաթոշակ է սահմանել ֆակուլտետի բարձր առաջադիմություն ունեցող, ինչպես նաև հասարակական ակտիվություն ցուցաբերող ուսանողների համար և օրակարգի

չորրորդ հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ, տ.գ.թ. Ն.Միրզոյանին:

2. Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ, տ.գ.թ. Ն.Միրզոյանը նշեց, որ սահմանված կրթաթոշակներին կարող են հավակնել 4 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողները: Հավելեց, որ անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների ընտրությունը կատարվել է գործող կարգի պահանջներին համապատասխան և ներկայացրեց հավակնորդներին՝ Բենիկ Արտեմի Բալայան (3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,97), Անի Մկրտիչի Հովհաննիսյան (3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,76), Անի Գարիկի Ամիրխանյան (4-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,61), Ադրինե Գրիգորի Ավետիսյան (4-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,57):

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը դնել քվեարկության. երաշխավորել ընտրված ուսանողներին՝ ստանալ նշված անվանական կրթաթոշակները:

4. ՈՐՈՇԵՑԻՆ.

1) «Կառավարում» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Բենիկ Արտեմի Բալայանին երաշխավորել ստանալու Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակ:

2) «Կառավարում» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Մկրտիչի Հովհաննիսյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակ:

3) «Ֆինանսներ» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Անի Գարիկի Ամիրխանյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ:

4) «Ֆինանսներ» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Ադրինե Գրիգորի Ավետիսյանին երաշխավորել ստանալու Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակ:

2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ. Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյանի՝ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու մասին հարցը:

5.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նախ նշեց, որ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության պահանջները հստակ սահմանված

են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից: Օրակարգի ընթացիկ հարցերում ընդգրկված առաջին հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանին:

2. Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը նշեց, որ ներկա պահին ամբիոնում թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք ունի միայն ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հ.Մնացականյանը (արտաքին համատեղությամբ աշխատող): Հավելեց, որ ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գևորգ Կիրակոսյանի (արտաքին համատեղությամբ աշխատող) գիտական գործունեությունը բավարարում է Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին: Ընդգծեց, որ Ֆինանսահաշվային ամբիոնը 03.09.25թ. թիվ 1 նիստում, միաձայն քվեարկությամբ, որոշում է կայացրել. միջնորդել ֆակուլտետի գիտական խորհրդին՝ երաշխավորելու ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գևորգ Կիրակոսյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ քննարկվող հարցը ցավոտ խնդիր է ֆակուլտետում, վիճակը բարվոք է միայն Կառավարման և գործարարության ամբիոնում, որտեղ 5 հոգի ունեն իրավունք թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու: Այս ուղղությամբ ֆակուլտետում պետք է լուրջ աշխատանքներ տարվեն՝ խթանվեն դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ստանալու գործընթացները:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով քննարկումը, առաջարկեց՝ քվեարկությամբ երաշխավորել Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

5.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի 03.09.25թ. կայացած թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ երաշխավորել տ.գ.թ., դոցենտ Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյանին Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյանի՝ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորի օգնականներ նշանակելու մասին հարցը:

5.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հայտնեց, որ ԵՊՀ-ում գործող «Պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավելու կարգի» համաձայն արդեն երրորդ անգամ ֆակուլտետի գիտխորհուրդը քննարկում է պրոֆեսորի օգնականներ նշանակելու հարցը: Նշեց, որ ավանդաբար այս հարցում միջնորդություն է ներկայացնում միայն Կառավարման և գործարարության ամբիոնը և հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

2. Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ գործող կարգով առաջնորդվելով իրազեկել են ֆակուլտետի ասպիրանտներին և մագիստրատուրայի ուսանողներին, հավաքագրել են ստացված հայտադիմումները: Ընդգծեց, որ մագիստրատուրայի ուսանողների համար այս գործառույթը համարժեք է մասնագիտական պրակտիկային, իսկ ասպիրանտների համար՝ գիտամանկավարժական բաղադրիչին: Հավելեց, որ պրոֆեսորի օգնական ունենալու ցանկություն են հայտնել ամբիոնի 6 աշխատակից՝ դոցենտ, տ.գ.թ. Կ.Խաչատրյանը, դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը, պրոֆեսոր, տ.գ.դ. Գ.Վարդանյանը, պրոֆեսոր, տ.գ.դ. Հ.Սարգսյանը, դոցենտ, տ.գ.թ. Ն.Միրզոյանը, դոցենտ, տեխ.գ.թ. Հ.Զաքոյանը: Գործող կարգի համաձայն անձին որպես պրոֆեսորի օգնական ներգրավելու երաշխավորությունը քննարկվել է Կառավարման և գործարարության ամբիոնի նիստում՝ սահմանված ժամկետում:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց պրոֆեսորի օգնականներ նշանակելու վերաբերյալ Կառավարման և գործարարության ամբիոնի ընդունած որոշումը հաստատել քվեարկությամբ:

5.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 03.09.25թ. թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի համար.

1) ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյանի օգնական նշանակել՝ ամբիոնի առկա ուսուցմամբ 2-րդ տարվա ասպիրանտ Սիլվիա Սարգսյանին:

2) «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հովիկի Հակոբջանյանի օգնական նշանակել՝ նույն կրթական ծրագրի առկա ուսուցման 1-ին կուրսի մագիստրանտ Անուշ Ծատուրյանին:

3) Ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գագիկ Իշխանի Վարդանյանի օգնական նշանակել՝ ամբիոնի առկա ուսուցմամբ 2-րդ տարվա ասպիրանտ Ալիսա Գևորգյանին:

4) Ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հայկ Լևոնի Սարգսյանի օգնական նշանակել՝ «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի առկա ուսուցման 2-րդ կուրսի մագիստրանտ Ստեփան Անանյանին:

5) Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ, տ.գ.թ. Նարինե Էռնեստի Միրզոյանի օգնական նշանակել՝ «Ծուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի առկա ուսուցման 1-ին կուրսի մագիստրանտ Մարիամ Պողոսյանին:

6) «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Վարազդատի Զաքոյանի օգնական նշանակել՝ նույն կրթական ծրագրի առկա ուսուցման 1-ին կուրսի մագիստրանտ Եկատերինա Մովսիսյանին:

ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5.3 ԼՍԵՑԻՆ. Փոխատեղման հավակնորդ ուսանողների հաստատման վերաբերյալ հարցը:

5.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ այս հարցի քննարկումը որոշման կայացում չի պահանջում: Հավելեց, որ ըստ կարգի փոխատեղման արդյունքները հաստատում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը, իսկ գիտխորհրդում փոխատեղման արդյունքների մասին հաղորդումն ընդունվում է ի գիտություն: 2024-2025 ուստարվա արդյունքներով ֆակուլտետում փոխատեղման մասին տեղեկատվությունը ներկայացնելու համար ձայնը փոխանցեց ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանին:

2. Դեկանի տեղակալ, դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանը հաղորդմամբ ներկայացրեց 2024-2025 ուստարվա արդյունքներով ֆակուլտետում փոխատեղման մասին տեղեկատվությունը: Նշեց որ, այդ նպատակով 03.09.2025թ. կայացել է ԵՊՀ ՏԿՖ ուսանողական նպաստների ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման և պետական կրթաթոշակների հատկացման մանդատային հանձնաժողովի նիստ, որի ժամանակ արձանագրվել են փոխատեղման արդյունքներն ըստ առաջադիմության՝ ձևավորված ՄՈԳ-ի միջոցով: Հավելեց նաև, որ գործընթացին մասնակցել են ֆակուլտետում սովորող բակալավրի 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերի և մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողները: Հաղորդումն ամփոփելով՝ ընդգծեց, որ վերջին մի քանի տարիների արդյունքներով անվճար սովորողների 60-70 տոկոսին հաջողվում է ուսումը շարունակել անվճար համակարգում՝ թեժ մրցակցության պայմաններում:

5.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի դեկանի տեղակալ, դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ